Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/221» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

22.11.2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Զեյնալյան /գնահատող/, Կ. Արամյան /գնահատող/, Ժ. Բալաբանյան /բացող/, Ա. Ավետիսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման, պահանջվող փաստաթղթերի ներկայացման և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Մկրտչյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակիցների հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.2 Ինչպես նաև մասնակիցը տրամադրել է Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, որտեղ գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ: Ըստ հրավերի առաջին մասի 4.3 կետի ե ենթակետի, առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը: Այ Թի Պրոջեքթս ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում նշված չէ առաջին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների երաշխիքային ժամկետները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներկայացվող ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

Առաջին չափաբաժնով Այ Թի Պրոջեքթս ՍՊԸ-ն ներկայացրել է 31,5 դյույմ ունեցող անկյունագծով մոնիտոր, ինչը գնահատող հանձնաժողովը գնահատեց բավականին մեծ չափսերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

1.3 Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Այ Թի Պրոջեքթս» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Միաժամանակ առաջարկել «Այ Թի Պրոջեքթս» ՍՊԸ-ին հնարավորության դեպքում վերանայել մոնիտորի չափերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Մկրտչյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 09:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մկրտչյան

Անդամներ՝ ---------- Վ. Զեյնալյան

---------- Կ. Արամյան

---------- Ժ. Բալաբանյան

---------- Ա. Ավետիսյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան